ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *և*.**

1) հոգ-իճակ, թեպետ-, օթ-ան, բ-եռել
2) հար-ան, ագ-ազ, տ-ական, տեր-աթափ
3) ոսկ-որել, ոսկ-արս, պարթ-, գոտ-որ
4) հոգ-որ, իջ-անել, սերկ-իլ, կար-որ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով.**

1) բառ(մասնիկ), օրոր(շորոր), արյուն(քրտինք), դեփ(դեղին)
2) չորս(հինգերորդ), գոռում(գոչյուն), ցուցահանդես(վաճառք), ռուս(հայկական)
3) աչքով(ունքով), անցած(գնացած), հույս(ապավեն), համենայն (դեպս)
4) այստեղ(այնտեղ), դեմ(հանդիման), բառ(իմաստ), ամառ(ձմեռ)

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների *ոչ* բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՄԵԾ ՀԱՅՔ, ԱԼՖՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵ, ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇ
2) ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ԴԱՎԻԹ ԷՋՄԻԱԾՆԵՑԻ, ԷԼ ՍԱՅԻԴ, ՇՐԻ ԼԱՆԿԱ
3) ԱՇՈՏ ԿԱՌՈՒՑՈՂ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, ԱԼՄԱ ԱԹԱ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ
4) ԱԴԻՍ ԱԲԵԲԱ, ԱՇՈՏ ԲԱՐԵՊԱՇՏ, ՌԻՉԱՐԴ ԵՐՐՈՐԴ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

1) երկրաբան, տարկետում, տարեվերջ, թվանշան
2) վիպագիր, կարմրաթուշ, սրտամոտ, անկողնային
3) մարդկային, ձգան, ընչաքաղց, պատանյակ
4) սրընթաց, մրգառատ, հոգյակ, փոշոտվել

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ.**

1) պարան, ելարան, ճոպան, թոկ
2) հրապուրել, դյութել, հմայել, գերել
3) աժդահա, վիթխարի, հսկա, ահավոր
4) ականավոր, տաղանդավոր, նշանավոր, ակնկոր

6 **Ո՞ր նախադասության մեջ է *խոր* բառը գործածված փոխաբերական իմաստով:**

1) Խոր լռության մեջ հանկարծ մի ձայն լսեց:
2) Առաջ անցան՝ խոր ձյունը ճեղքելով:
3) Խոր ձորի մեջ գալարվում էր գետը:
4) Տարիները նրա դեմքին խոր կնճիռներ էին գծել:

7	**Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Աստանդական կյանքը այնքան տառապանք էր պատճառել նրան, որ հայրենիք վերադառնալուց հետո մեկուսացել ու դարձել էր տնակյաց:
2) Պետրոս Կամսարյանը թյուր կարծիք ուներ հայ գյուղի ու նրա կենցաղի մասին:
3) Մի շարք երկրներում ընդունված է եղել շուշանի պատկերով խարամ դնելը:
4) Վանատուրը՝ իբրև աստված, խորհրդանշել է հայ մարդու ապանջականությունը:

8	**Տրված բառերից քանիսի՞ արմատներից մեկին կարող է միանալ -ք վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

արտադրություն, թռչնորս, շարական, տարեկան, ավետարանիչ, ալեբախություն, անասնապահություն, աղեստամոքսային, հետաքննիչ, բեռնակրություն:

1) ութի
2) բոլորի
3) հինգի
4) վեցի

9	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:**

1) խմելիք, զավեշտ, ճյուղակոտոր, հմայք
2) զինագործ, մեսրոպատառ, ծանրասիրտ, կաթնաշոռ
3) գեղադիր, արհամարհանք, կրկնապատկեր, սփռոց
4) տխրանք, դերձակ, հանգանակություն, թթողի

10	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

1) ավելորդ, վճռորոշ, խավարամած, հմայիչ
2) մարդախույս, զարմացած, միակ, պարզունակ
3) բաղձալի, ամենևին, վայելուչ, մկանուտ
4) առաջնային, այսպիսի, բարձրորակ, մշտապես

11	**Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
2) Բայց, ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:
3) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
4) Վաղ մանկությունից զրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:

12 **Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ *չկա:***

1) հնացրեց, կորավ, հալվեց, կառուցեցի
2) եկա, մոլորեցրեց, խաղացրինք, հանգչեց
3) հարցրի, սրդողաց, մոտեցա, թողի
4) բարձրացրեցի, արեցի, լցրի, հասանք

13 **Ո՞ր նախադասության մեջ *մինչև* բառը կապ *չէ:***

1) Մինչև գյուղից հեռանալը որոշեց այցելել նաև տարեց ուսուցչին:
2) Մինչև վերջին րոպեն ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:
3) Մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս ամենը:
4) Մինչև առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա:

14 **Ո՞ր նախադասությունն է բարդ:**

1) Ասում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տարատեսակ ծաղիկներով, թրթռուն թիթեռներով, կարկաչուն գետերով, սառնորակ աղբյուրներով:
2) Նայեց բանաստեղծը երկնքի կապույտ վրանին՝ արշալույսի մեջ թաթախուն, ոսկու մեջ ճախրող թռչուններով:
3) Երփներանգ գույներով զարդարված ձորակում ամեն գարուն՝ տաքերն ընկնելուն պես, մասրենիներն են ծաղկում՝ շուրջը սփռելով արբեցնող բուրմունք:
4) Շապուհ արքան, խաբեությամբ Տիզբոն հրավիրելով Արշակ Երկրորդին, շղթայակապ բանտարկեց նրան Անհուշ բերդում:

15 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը բարձր պահեր ազգային արժանապատվությունը:
2) Բայց, անշուշտ, բանը բանից անցել էր:
3) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
4) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:

16 **Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր *չկա:***

1) Պատշգամբի սյունաշարերին կախված գույնզգույն լապտերները լուսավորում էին ծաղկանախշ գորգերով զարդարված սրահը:
2) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեգօծ արևի տակ, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:
3) Բայց Պետրոսին հարկավոր էր մի ծածկ՝ անձրևից պատսպարվելու համար, ուստի այդտեղ գտնվող թախտին շտապ-շտապ փռելով իր անկողինը՝ պառկեց քնելու:
4) Ծերունի կառապանը երկիմաստ ծիծաղում էր այդ մանրախնդիր մարդկանց վրա:

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Թեև փետրվարի վերջն էր, այնուամենայնիվ ցրտերն օրեցօր սաստկանում էին, քաղաքում զգացվում էր մթերքի, առաջին հերթին հացի կարիք, քանի որ կապը խզված էր շրջանների հետ, և գյուղացին այլևս ոչինչ չէր բերում քաղաք՝ ո՛չ մթերք, ո՛չ վառելիք:



18 **Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս նախադասություն կա:**

1) Երանի նրան, ով կարող է գեղեցիկ ստով խաբվել:
2) Պատահում էր՝ անձրևը շաբաթներ էր տևում:
3) Ե՞րբ էր, որ նա խոստացավ գալ, շուտ գալ…
4) Զարմանալին այն է, որ նրա հայացքները բնավ չէին փոխվում:

19 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Ոչ ոք չնկատեց, որ սպարապետը իր զինվորների հետ մոտենում է ամրոցին:

1) Ոչ ոք չնկատեց սպարապետին իր զինվորների հետ ամրոցին մոտենալիս:
2) Ոչ ոք չնկատեց իր զինվորների հետ ամրոցին մոտեցած սպարապետին:
3) Ոչ ոք չնկատեց իր զինվորների հետ ամրոցին մոտեցող սպարապետին:
4) Ոչ ոք չնկատեց սպարապետի՝ իր զինվորների հետ ամրոցին մոտենալը:

20 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Հետո ջրերի վրա, նուրբ արահետների վրա ծանրանում է ցուրտ մառախուղը և լոռեցիների բարձր աշխարհում մաղում է ձյունը:
- Հետո աղմկում է ամբողջ անտառը՝ քամին է շառաչում, և հողմահալած մառախուղը կորչում է փչակներում:
- Իմ առջև կանգնած է այդ լեռների մարդը՝ հովիվների շառավիղը՝ մերօրյա հերոսը:
- Հովհաննես Թումանյանն ինձ թվում էր հաճախ երազում տեսած կամ մանկական հեքիաթից մեր աշխարհն ընկած մի կախարդական հայելի, որին նայողը կտեսնի իր մանկությունը, մանկությունը՝ մութ ու անվերադարձ:
- Լոռու ձորում կնստի ձմեռը, և ծմակներում կոռնա գազանը, հոտոտելով՝ նա կհասնի մինչև քարափի եզրը և ահից հետ կդառնա՝ տեսնելով լույսերով ողողված ձորը:

1) երեքում
2) չորսում
3) մեկում
4) երկուսում

21 **Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Սրտիս դառնահեծ հառաչանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընծայում եմ քեզ, ո՜վ գաղտնատես.
Եվ իմ սասանված մտքի ճենճերող
Իղձերի պտուղ նվերն այս դրած
Անձս տոչորող թախծի կրակին՝
Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ:

1) արևելահայերենով
2) միջին հայերենով
3) գրաբարով
4) արևմտահայերենով

22 **Պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա «Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Փոքր Մհեր» ճյուղի վերաբերյալ:**

- Մհերը լուծում է հոր վրեժը՝ սպանելով Չմշկիկ Սուլթանին և կոտորելով նրա զորքը:
- Մհերը ոչնչացնում է Կոզբադինի թոռներին, որոնք ուզում էին հարկատու դարձնել Սասունը:
- Հոր անեծքով Մհերը մնում է անմահ ու անժառանգ, դևերը բռնում են նրան և փակում Ագռավաքարում:
- Տարին երկու անգամ մութ ժայռում փակված Մհերի երկու հավատարիմ շները կրծում են նրա շղթաները, որպեսզի նա դուրս չգա և կործանի աշխարհը:

1) երեքում
2) չորսում
3) մեկում
4) երկուսում

23 **Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի ստորև բերված սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ կա:**

1) Բարեկենդանի օրը ուսուցիչը Խոնարհին տեսնում է աղջիկների հետ իրենց դիմացի տան կտուրի վրա ձյունով խաղալիս:
2) Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:
3) Հեղինակ-հերոսը՝ 17-18 տարեկան մի երիտասարդ՝ բանտից նոր դուրս եկած, իր բարեկամի առաջարկով գնում է Ջորագյուղ և զբաղվում ուսուցչությամբ:
4) Ուսուցիչը Խոնարհին առաջին անգամ տեսնում է անտառի բացատում:

24 **Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքում Ջոն Բայրոն, իր գողացված ձին Մուրաղի ու նրա զարմիկի մոտ տեսնելով, ասում է, որ՝**

1) համոզված չէ, որ իր ձին է, որովհետև իր ձիու ատամներն ավելի առողջ էին:
2) թեև դա նման է իր ձիուն, բայց իր ձին ավելի գեղեցիկ էր ու ուժեղ:
3) դա իր կորցրած ձին է, և նրանք պարտավոր են այն հետ վերադարձնել:
4) ինքը վստահ կլիներ, որ դա իր ձին է, եթե նրանց ծնողներին չճանաչեր:

25 **Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Չըտեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունէն բաշ, նազա՛նի,
Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կու շինիս դումաշ, նազա՛նի,
Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՜շ, վա՜շ, նազա՛նի:

1) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»
2) «Աշխարումս ա՛խ չիմ քաշի»
3) «Թամամ աշխար պըտուտ էկա»
4) «Աշխարս մե փանջարա է»

26 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Հովի զրույցին ունկն դնելով՝ Աբու Մահարին խոսում էր անձայն.
-Աշխարին էլ, ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք .....:

1) հավերժական
2) դյութական
3) մոգական
4) իսկական

27 **Հատվածներից ո՞րը Պետրոս Դուրյանի որ բանաստեղծությունից է:**

ա. Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ:
բ. Ո՜հ, կա՛յծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք՝ ապրի՜մ…
Ի՜նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՜մ…
գ. Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկները հոդ չեն թոռմիր…
դ. Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գտնել աղբերքն համայր…

1. «Իմ ցավը»
2. «Տրտունջք»
3. «Լճակ»
4. «Սիրել»

1) ա-4, բ-1, գ-3, դ-2
2) ա-2, բ-3, գ-4, դ-1
3) ա-4, բ-2, գ-3, դ-1
4) ա-1, բ-2, գ-3, դ-4

28 **Պնդումներից ո՞րն է սխալ Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

1) Աղունի բոլոր ձեռքբերումները իրականություն են դարձել համառ կամքի ու տոկունության շնորհիվ:
2) Աղունը լեզվանի է, Սիմոնը՝ լռակյաց, Աղունն անհանգիստ բնավորություն ունի, Սիմոնը՝ հանգիստ, դանդաղաշարժ և անճարակ:
3) Վիպակում գործողությունները ծավալվում են Հայրենական մեծ պատերազմի, նրան նախորդող և հաջորդող տարիներին:
4) Աղունը և Սիմոնը մեծացել են միասին, և ի վերջո նրանց մանկական մտերմությունը փոխվել է սիրո:

29 **Ո՞րն է Եղիշեի ասույթներից:**

1) «Քաջերի սերունդները քաջեր են»:
2) «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ-Արամ-Տիգրան»:
3) «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով»:
4) «Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:

30 **Ո՞ր շարքի բոլոր գրողներն են նորագույն շրջանի հայ գրականության ներկայացուցիչներ:**

1) Լեռ Կամսար, Նար–Դոս, Վարդգես Պետրոսյան
2) Կոստան Զարյան, Մուրացան, Գևորգ Էմին
3) Խաչիկ Դաշտենց, Վահան Տերյան, Վահագն Դավթյան
4) Հրանտ Մաթևոսյան, Սերո Խանզադյան, Մուշեղ Գալշոյան

31 **Ինչպե՞ս է Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի նույնանուն հերոսը բանտ ընկնում:**

1) Սպանում է սիրած աղջկա հետ կապված տղային:
2) Կռվի է բռնվում ոստիկանության հետ:
3) Նրան մատնում է իր սիրած աղջիկը:
4) Բռնվում է մեծ գողության մեջ:

32 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան -
Ու լուսավոր առավոտները իմ հոգու,
Ո՞վ դարձրեց - մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտեր երկու:

1) «Մահվան տեսիլ»
2) «Վահագն»
3) «Դանթեական առասպել»
4) «Անվերնագիր»

33 **Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ.**

տեսակետ, դեղահաբ, խաչակիր, մարզադաշտ, գործավար, քարհատ, մարտադաշտ, օրինագիծ, հորաքույր, անձ:

34 **Տրված հատվածներում ածականով արտահայտված քանի՞ որոշիչ կա:**

- Ես հաշտ եմ ապրում իմ բախտի հետ
  Ու տարբերում հստակ չարն ու բարին:
- Այնտեղ փողոց կա նահիրյան,
  Քարե մաշված մայթեր:
- Ասում են՝ հին վերքը հաճախ է ցավում,
  Երբ եղանակը ամպոտ է ու վատ:
- Ների՛ր, սիրելի՛ս, ների՛ր ինձ լուռ,
  Որ քո քնքուշ նազանքի տակ
  Ես չէի տեսել քո սիրտը տաք
  Եվ արտասուքիդ լույսը մաքուր:

35 **Տրված շարքերից քանիսի՞ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը.**

- բա-բիռ, բա-բեր, բա-բասել, ա-բրոս
- ճրագալույ-, ցն-ել, ժամասա-ություն, ցն-ություն
- դժո-ք, բա-տակ, նա-շազարդ, տա-տակամած
- բաղդա-ել, խր-վիլակ, զար-ուղի, ճ-քավոր
- խոտհար-, տա-դեղ, բազրի-, վարա-իչ

36 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածվել:**

Այնպես գգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում,
Շուրջս վառված է մի անուշ տագնապ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում…

- մակդիր
- շրջադասություն
- փոխաբերություն
- համեմատություն

37 **Բառերից քանի՞սն են *կրկնավոր* բարդություն.**

նետ-աղեղ, մեծ ու փոքր, գլուխ տալ, իրարով անցնել, ասան-չասան, անթիվ-անհամար, մարդ-մուրդ:

38 **Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ:**

Սակայն ինձ չհաջողվեց տեսնել նրա դեմքը. իմ կանգնելու տեղից առաջ գնալ չէի կարող, որովհետև լեփ–լեցուն եկեղեցում ընդհանրապես անհնար էր շարժվել, և ես առանց մի վայրկյան ձանձրանալու սպասեցի մինչև պատարագի վերջը:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. արդյունավետ, 2. ուսանողական, 3. գործնական, 4. պիտանի, 5. հանդիսատես, 6. բարեկամական, 7. հետաքրքրություն, 8. ընթացիկ, 9. դիտողություն:

40 **Նշել այն բառերի համարները, որոնք հականիշ են *իրական* բառին.**

1. մտացածին, 2. անիրական, 3. սին, 4. հնարովի, 5. անընտգյուտ, 6. երևակայական:

41 **Նշել այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Բայց Բուդդան (1) որի վարդապետության սկիզբը փառավոր է (2) միջուկը իմաստուն (3) և ավարտը փրկարար (4) կարեկցանքով լցված դեպի ամբոխի անհավատությունը (5) նորից դիմեց նրան (6) թշվառության և տանջանքի այդ տգետ ժառանգին: Նա բացեց ժողովրդի առաջ ճանապարհները դեպի Նիրվանան դեպի նրա երանավետ անդորրը: Սակայն (7) ամբոխը ծաղրում էր նրան: Եվ նա կանգնելով Հիմալայն ի վեր (8) ասաց

Ով Ագնի լսիր իմ աղոթքը (9) և թույլ մի տուր որ թագավորի անհավատությունը:

42 **Նշել նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Պոլսից հետո, որտեղ երկրորդ ծերբակալումից Զոհրապը մի կերպ էր գլուխն ազատել, Փարիզում կյանքը նոր իմաստ էր ստացել քառասունյոթամյա գրողի համար. հիմա նա վերջապես զգում էր ապրելու հրճվանքը:

1. **կյանքը -** ուղիղ խնդիր, **քառասունյոթամյա** - որոշիչ
2. **զգում էր** - պարզ ստորոգյալ, **հրճվանքը** – ուղիղ խնդիր
3. **որտեղ** – տեղի պարագա, **երկրորդ** - որոշիչ
4. **ծերբակալումից** - անջատման անուղղակի խնդիր, **մի կերպ** – ձևի պարագա
5. **հիմա** - ժամանակի պարագա, **նա** - ենթակա

43 **Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերը դերանուններ են:**

1. նույնչափ, ինչ-որ, ինչպիսի, նախքան
2. միևնույն, իրար, ոչինչ, մյուս
3. ինքներս, այնքան, ոմանք, ինչպիսի
4. ոչ ոք, ամենայն, միմյանց, մի քանի
5. ամեն ոք, մյուս, համայն, որևիցե
6. յուրաքանչյուր, մինչդեռ, նույն, որոշ

44 **Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Վահան Տերյանի որ ստեղծագործությունից է:**

- Կար մի երգ հեռավոր աշխարհում,–
  Դու այն երգն ես կրկնում հեռավոր–
  «Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
  Եվ հին են քո խոսքերը բոլոր…
- Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
  Կարոտավառ երազում ենք միշտ իրար…
- Բարբարոսներ շատ կրգան ու կանցնեն անհետ,
  Արքայական խոսքը մեր կրմնա հավետ:
- Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
  Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին…

1. «Կարուսել», 2. «Fatum», 3. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին»,
4. «Տխրություն»:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հայերենում վերջածանցներն ավելի շատ են, քան նախածանցները:
2. ***Քարանձավ, երկնառաք, տնավեր*** բառերը անհոդակապ բարդ բառեր են:
3. Բարդ բառերը, ըստ արմատների քանակի, կարող են լինել երկարմատ, եռարմատ, քառարմատ:
4. Բառի հիմքը չի կարող համապատասխանել արմատին:
5. Եթե բարդ բառի երկրորդ արմատը սկսվում է ձայնավորով, ապա հոդակապ չի դրվում առանց բացառության:
6. Ածանցումը բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից է:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա.**

1) գործու-ում, բու-այական, ու-ափառ, հե-են
2) օ-ան, տա-երք, ու-ակի, տա-ալուծել
3) ք-ախույզ, վշտա-ուկ, խճու-ի, բե-իություն
4) ու-ալար, հակըն-եմ, մ-կաշունչ, հո-երգություն

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.**

1) չքնաղակերտ, վրիժառու, սանրվածք, տտիպ
2) տվնջյան, տրամաբանել, քստմնելի, օրհնել
3) աննշմար, անընտել, մրրկող, կարծր
4) տվյալ, ճշտություն, գաղտնավանկ, կրկնապատկել

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա.**

1) լրջախոհ, նկարչական, ուղեկից, շրջադարձ
2) օրինապահ, ուսուցիչ, կավճոտ, սուզանավ
3) գետնաքարշ, գիտնական, հնձվոր, խուսափել
4) վերջնագիծ, քննություն, լսափող, նստարան

49 **Ո՞ր նախադասության մեջ դարձվածք *չկա:***

1) Վերքիս ցավից լաց եմ լինում,
   Դու ինձանից նեղանում ես,
   Նեղանալը՝ քարը գլխին,
   Սկսում ես նեղացնել:
2) Եվ արժե՞ր արդյոք, որ աշխարհ գայիր
   Մի տուն, մի գլուխ պահելու համար:
3) Երազեցի շարունակ
   Իմ կյանքի մեջ ես մանկուց
   Ու մնացի միշտ մենակ
   Պատրանքի մեջ ես մանկուց:
4) Խորքերում գանձ ունեն քարափները,
   Թիկունքներին ունեն անտառ ու հերկ...
   Միայն մի բան չունեն քարափները,
   Քարափները չունեն կարապի երգ:

50 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **ճրագալույց**- ճրագները հանգցնելը, **խայտաբղետ**-զանազան գույներից բաղկացած
2) **մորի**-մորենու պտուղը, **դիպակ**-որևէ ստեղծագործության հատված
3) **մեղանչել**-մեղք գործել, **երկնուղեշ**-դեպի երկինք ձգվող ճյուղերով
4) **աղորիք**-հացահատիկ աղալու մեքենա, **նյութել**-որևէ դավանության հետևել

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր.**

1) անհուսություն, տարրալուծում, լեզվաբանություն, հայազգի
2) թռչնաբուծարան, ուրվապատկեր, բնակատեղի, հեռուստացույց
3) ձեռնտու, վարկառու, աչառու, զրպարտիչ
4) գործարանատեր, վիրակապարան, աչքաբաց, ավտոկայան

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են նախածանցավոր.**

1) գերազանց, գերծանր, գերարագ, գերեվաճառ
2) ենթագլուխ, ենթաշերտ, ենթակա, ենթամաշկ
3) անստույգ, անպատիժ, անձավ, անծուխ
4) արտաքին, արտեզր, արտասահման, արտակարգ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) ձմեռ, սառցալեռ, հաստատում, մանուկ
2) աշուն, որմնասյուն, ընդմիջում, արարում
3) նախադուռ, գումարում, արյուն, նուռ
4) դերանուն, ամառ, շարժում, օրոր

54 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

1) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:
2) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:
3) Սրբազա՛ն, թող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի ղողանջը:
4) Սակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարգևված քեզնից համառ թշվառիս՝ Քո աղերսով քեզ պիտի պաղատեմ…

55 **Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ *չկա:***

1) Գյուղացիներից մեկը շինարարության համար քար հանելու ժամանակ գետնի տակից գտնում է զանազան ամանների կտորներ ու այլ իրեր:
2) Կոհակները օրորում էին նավը, կուտակվում իրար վրա, բախվում իրար, հեռու քշվում՝ կործանվելով ահարկու գոռոցով:
3) Կարծելով, որ վերջացավ խոսակցությունը պրոֆեսորի հետ՝ ուսանողները վեր կացան հրաժեշտ տալու:
4) Նա անցավ նոր ավարտված մի շենքի առջևից, հետաքրքրությամբ դիտեց շենքը և տեսավ, որ պատերը ներկված են զանազան գույներով:

56 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Կապույտ երկնքում՝ արևի կողքին, մի երկու րոպե շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
2) Մեղվանոցի մոտով՝ ձորի ճանապարհով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:
3) Նա վեր կացավ, մոտեցավ չարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով, ինչպես կես դար առաջ:
4) Այդ օրերին գյուղը կրկին ստացավ մի զամբիկ՝ տեղական ձիերից բարձր:

57 **Ո՞ր տարբերակում է ընդգծվածը նախադասություն:**

1) Երդվել էր **արհամարհել աշխարհային թովիչ կյանքը:**
2) Վերցրեց գիրքը և **առանց որևէ բառ ասելու՝** դուրս եկավ գրադարանից:
3) Լայն ճակատը ակոսվում էր ու **գնալով մթնում:**
4) Իմ սենյակի դեմուդեմ ապրում էր մի կոշկակար **իր 10–12 տարեկան թոռան հետ:**

58 **Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:**

Հարսանիքների ժամանակ նորելուկ ու նշանավոր աշուղների հետ մրցում էին նաև տեղացիների մեջ հայտնի հորովել երգողները:

1) ստորոգելի
2) ենթակա
3) որոշիչ
4) ուղիղ խնդիր

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից բաժանվել էր նա պատանության տարիներին: *(անջատման անուղղակի խնդիր)*
2) Նրանք ծանոթացան այն օրը, երբ Աստղիկը կայարան էր գնացել՝ ամուսնուն դիմավորելու: *(որոշիչ)*
3) Նա շատ էր տխրում, որ հնարավորություն չուներ մշտապես բնակվելու բնության այդ խաղաղ անկյունում: *(պատճառի պարագա)*
4) Նահապետ Քուչակի քերթությունը ապացուցում է, որ մեր ժողովուրդն ընդունակ է կենսուրախության ու մեծ թռիչքների: *(ուղիղ խնդիր)*

60 **Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Սպարապետի մտնելուն պես դահլիճում բոլորը ոտքի կանգնեցին:*
   Հենց սպարապետը դահլիճ մտավ, բոլորը ոտքի կանգնեցին:
2) *Սպառազեն խումբը մտրակեց նժույգները և գնաց դեպի հարավ՝ այլածիններից մաքրելու իր երկիրը:*
   Սպառազեն խումբը մտրակեց նժույգները և գնաց դեպի հարավ, որպեսզի այլածիններից մաքրի իր երկիրը:
3) *Այդ կինը և ճոճվելով քայլող այդ տղամարդը ինձ դուր չեկան:*
   Այդ կինը և այդ քայլող տղամարդը, որ ճոճվում էր, ինձ դուր չեկան:
4) *Շուռ գալով նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:*
   Երբ շուռ եկավ, նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:

61 **Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Արևելյան քաղաքում փոշոտ փողոցի ստվերոտ անկյուններից մեկում այդքան կեղտոտ սովորաբար արևելյան շուկաներն են լինում միջօրեի տապին պառկել էր մի ծերուկ դերվիշ:
2) Վերևում աստղազարդ երկինքն էր ներքևում ծովի հազիվ նշմարվող արծաթազօծ մակերևույթը:
3) Երկար ուղևորության ընթացքում այդ ուղևորությունը նրան պարտադրված էր վերևից փորձում էր հասկանալ ինչ նպատակով են իրեն հեռու պահում հաշվեմատյաններից:
4) Նրանք ամբողջ ամառ քաղհանում էին տարածքը բայց մոլախոտերին վերջ չկար մինչև մաքրելով հասնում էին վերջին մարգերին առաջին մարգերում նորերն էին ծլում:

62 **Պնդումներից որո՞ւմ սխալ** ***չկա:***

1) Դանիել Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուն բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը կոչվում է «Սարսուռներ», երկրորդը՝ «Կրկեսին մեջ»:
2) Դ. Դեմիրճյանը Վարդանանց պատերազմի թեմային անդրադարձել է նաև մինչև «Վարդանանք» պատմավեպը գրելը:
3) Հայ նորագույն գրականության հիմնադիրներն են Եղիշե Չարենցը և Վահան Տերյանը:
4) Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը կազմող մասերը կոչվում են սուրահներ, Պ. Սևակի «Անլռելի զանգակատունը» կազմող մասերը՝ համազանգեր, Հովհաննես Շիրազի «Բիբլիական» պոեմինը՝ ողողանջներ:

63 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

ա. Ու լեռնային վրտակների
բ. Հընչյուններով դյութական
գ. Մրտան կաղնին հաստաբուն
դ. Կանչում էին հրրաշալի
ե. Անտես, անհետ չրքացան
զ. Ալիքները պաղպաջուն
է. Ու հենց շողաց ցոլքն արևի
ը. Խոր սուզվեցին ակն աղբյուրի

1) ը, գ, է, ե, դ, ա, բ, զ
2) դ, բ, է, ե, ը, գ, ա, զ
3) է, գ, ա, զ, դ, բ, ը, ե
4) ը, զ, ա, գ, է, դ, բ, ե

64 **Պնդումներից քանի՞սն են ճիշտ Ռաֆֆու «Սամվել» վեպի վերաբերյալ:**

- Վահանի կնոջ՝ Որմիզդուխտի ներքինապետը Հայաստանում զբաղված էր լրտեսությամբ:
- Մուշեղ սպարապետը Շապուհի կանանոցի հետ Պարսկաստան է ուղարկում նաև Տաճատուհուն:
- Վահան Մամիկոնյանին զարմացնում է Համազասպուհու հավատարմությունը սեփական հորն սպանած Արշակ արքային:
- Աշխենին սպառնացող վտանգի մասին Սամվելին զգուշացրել էր Փառանձեմ թագուհին:

65 **Բառերից քանիսի՞ վերջին արմատն է միավանկ.**

տեղատվություն, անմեղսակից, կենսաժպիտ, ինքնուսույց, մանրազնին, փոշեկուլ, շահամոլ, վաղանցիկ, ալեկոծ, կառավարում, վերնաշապիկ, կոփամարտ:

66 **Տրված հատվածներում կապական կառույցով արտահայտված քանի՞ պարագա կա:**

- Տարան անտակ էն ժեռ քարից,
  Որ կանգնած է մինչ էսօր,
  Էն ահավոր քարի ծերից
  Գլորեցին դեպի ձոր:
- Ավերակ բերդին սև ամպի նման
  Ծուխն ու թշնամին չոքել են ահա:
- Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
  Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց՝
  Չոբան Սարոյին գտնելու համար,
  Որ սարից իջավ, Անուշին փախցրեց:
- Էն մենավոր ծառի տակ
  Փոս փորեցին մի խորին...

67 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են:**

1. Հայաստա՛ն, անո՛ւնդ տալիս
   Ժայռի մեջ մի տուն եմ հիշում:
2. Ծիածանների լարերը վրան՝
   Ինձ քնար տվեց երկինքը մի օր:
3. Գարուն էր: Չեկած ամառ՝
   Փուլ եկավ երկնակամար:
4. Օրոր էր ասում աշունն անտառին,
   Բայց դեռ անտառի քունը չէր տանում:
5. Ծանր նստել է և ամեն մեկին
   Իրեն արժանի պատիվն է տալիս:
6. Արթնացող ամպի հառաչն առաջին
   Գալիս մտնում է ականջը նրա:

68 **Նշել այն մտքերի համարները, որոնք *չեն* բխում տեքստի բովանդակությունից:**

Գիտնականները վերականգնել են Թութանհամոնի դեմքը: Փորձին մասնակցել են Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի գիտնականները, որոնք, ուսումնասիրելով փարավոնի գանգի լուսանկարները, միմյանցից անկախ կազմել են դեմքի պատկերը: Բոլոր խմբերի ստացած արդյունքները գրեթե միանման են, չնայած ֆրանսիացի և եգիպտացի գիտնականները գիտեին, որ փարավոնի դիմագիծ են վերականգնում, իսկ ամերիկացիները՝ ոչ: Արդյունքում 3300 տարի առաջ ապրած մարդու երեք դիմանկարներն էլ գրեթե նույնն էին և նման էին Թութանհամոնի զմռսված դեմքին: Նույնն էին դեմքի ձևը, չափերը, աչքերի ձևն ու դիրքը, գանգի համաչափությունը, սակայն տարբեր էին ստացվել քթի և ականջների ծայրերը: Ամերիկացիների կողմից առաջին անգամ օգտագործվեց գերբարձր ճշտություն ունեցող ռենտգենյան սարք, և այն պարզեց, որ փարավոնը եղել է նիհարակազմ ու մահվան պահին՝ մ. թ. ա. 1352 թ., երբ տասնինը տարեկան էր, նրա օրգաններն առողջ էին: Մահվան հավանական պատճառ կարող էր դառնալ ոտքի կոտրվածքից առաջացած բարդացումը, այլ ոչ թե սպանությունը, ինչպես կարծել են դարեր շարունակ: Նման կարծիքի առիթ դարձել էր 1968 թվականի նկարահանման ժամանակ գանգի մեջ հայտնաբերված ոսկորի բեկորը: Փոխարինելով Ամենհոթեպ Չորրորդին՝ գահակալման 8-10 տարիների ընթացքում նա երես թեքեց իր աստվածներից՝ դառնալով միաստված, և շատերը նրա սպանության վարկածը կապում էին հենց դրա հետ: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ նա սպանվել է իր գլխավոր խորհրդականի ձեռքով: Վերջինս հետագայում բարձրացել է գահին և ամուսնացել է փարավոնի այրու հետ:

1. Ըստ որոշ հետազոտողների՝ փարավոնը, երես թեքելով իր ժողովրդի պաշտելի աստվածներից, անցել է քրիստոնեության, ինչը դրդել է գլխավոր խորհրդականին սպանելու վերջինիս:
2. Ենթադրում են, որ փարավոնի վաղաժամ մահվան պատճառ կարող էր լինել նրա կնոջ և գլխավոր խորհրդականի սիրային կապը:
3. Իրարից անկախ գործող գիտնականների կողմից Թութանհամոնի դեմքի վերականգնումից հետո ոչ բոլոր դիմագծերն են նույնը եղել:
4. Հազար ինը հարյուր վաթսունութ թվականի ռենտգենյան նկարը հետազոտողներին բերել է այն եզրահանգման, որ 20-ամյա փարավոնը մահացել է գանգոսկրի կոտրվածքից:

69 **Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հետ ընդհանուր արմատ ունեն.**

1. սպառնացող, 2. սպառնագին, 3. սպառնալիք, 4. սպառնալից, 5. ուժասպառ:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բոլոր դերանուններն ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի:
2. Բոլոր ցուցական դերանունները հոլովվում են գոյականից տարբեր ձևով:
3. ***Ես, դու, նա, ինքը*** դերանունները եզակի թվում ունեն ձևով միմյանցից տարբերվող սեռական և տրական հոլովաձևեր:
4. ***Ով*** դերանունը հոլովվում է միայն եզակի թվում:
5. Ոչ բոլոր փոխադարձ դերանուններն են հոլովվում:
6. Բոլոր հոլովվող որոշյալ դերանունները ենթարկվում են գոյականական ***ի*** հոլովման: